

Մեծ Հայքի բավական ընդարձակ սահմաններ ունեցող նահանգներից մեկի՝ պատմական Ուտիքի¹ մի վտրիկ մասն է կազմում Հայաստանի Հանրապետության Խյուսիսարևելքում գտնվող նախկին Շամշադինի վարչատարածքային միավորը: Ուտիք աշխարհի և նրա բնակչության մասին հայմատենագրության մեջ պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ²: Երկրամասի գավառներից մեկը IX դարից մատենագրության մեջ հանդիպում է Տավուշ անվանումով, որը Բագրատունի թագավորների տիրույթների մի մասն է կազմել և համապատասխանում է ներկայիս Ադրբեջանի Թուվուզի (Տավուշի աղավաղված ձևն է), Ղազախի և ՀՀ նախկին Շամշադինի շրջաններին³: XII–XIIIդդ. այն նախ եղել է Կյուրիկյանների, ապա՝ Ջաքարյանների տիրապետության տակ: Գավառի Շամշադին անվանումը վկայված է ուշ միջնադարից, հավանաբար XVIII–XIXդդ.⁴: Ըստ Մ.Բարխուդարյանի, քանի որ Աղվանից Եսայի կաթողիկոսը Ատորին և Վերին Ջակամները անվանում է Ամիրշամ-Շատինլու, իսկ Ջակամների արևմտյան մասը՝ Շամշադին, հետևաբար Ամիրշամ-Շատինլու և Շամշադին անունների միջև ներքին կապ կա: Նա ենթադրում է, որ գավառի այդ նոր անունը մնացել է արաբների տիրապետության շրջանից և նշանակում է «Դամասկոսի հրամանատար» (Ամիր-Շամ)⁵: Իսկ աշխարհագրագետ

Կ.Ավետիսյանը տեղանվան հիմքը եամարում է «շամս-աղ-ոին» ռառակապակցությունը, որը նշանակում է «արեգակն հավատո»⁶: Սակայն ավելի հավանական է տեղանվան ծագումը կապել պարսիկների տիրապետության առավել ուշ ժամանակաշրջանի հետ, քանի որ ոչ արաբների տիրապետության ժամանակ, ոչ էլ նրանից հետո հայ մատենագրության մեջ Ուտիք, Տավուշ, Քուստի անվանումներից բացի, գավառի համար ուրիշ անվանում չի օգտագործվել:

Տավուշի գավառն արարների, մոնղոլների, լեզգիների, պարսիկների, թուրքերի և այլ ավարառու ցեղերի կողմից ենթարկվել է ռազմաթիվ ասպատակությունների: 1604–05թթ. պարսից Շահ Արաս I թագավորը, ի թիվս Հայաստանի այլ գավառների, Տավուշի ընակիչներին նույնպես գերեվարեց Պարսկաստան⁷: Մեծ ռոմագաղթից հետո գավառի տարածքում մնացին հատ ու կենտ փախըստականներ, որոնք, ըստ մեզ հասած սովանդությունների, ապաստանեցին լեռներում ու անտառներում: Հետագա դարերում գավառի ընակչությունը համալրվում է հիմնականում Ղարաբաղի և Գանձակի մելիքություններից վերաբնակված ազգաբնակչությամբ, որը հաստատվում է նախկին գյուղատեղերում ու ընկավայրերում: Այնուհետև 1750–60-ական թվականներին ընակիչների մի մեծ զանգված Շամշադինից տեղափոխվում և հաստատվում է Շուլավերում, որի ութ թաղամասերը կրում էին այն գյուղերի անունները, որտեղից եկել էին վերաբնակիչները (Կորխ, Քամանդար, Մրեջուր, Ղարա-Աուրադ, Շմեր, Աելիք-գաղա, Աղրուլախ, Մմրթու)⁸: Երկրորդ արտագաղթը Շուլավեր կատարվել է Մխիթար Քալանթարի առաջնորդությամբ, մոտավորապես 1800-ա-

¹ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 296:

² Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 177–178, 209: Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 116–117, 123, 159, 175–176: Մոսիսյան Օրբելյան, Մյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 308: Մովսես Կաղանկավազի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 65, 70, 73 և այլն:

³ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 315:

⁴ Հայ ժողովրդի պատմություն, Կ. IV, Երևան, 1972, էջ 149, 158, «Հայկական Մովսեսական Հանրագիտարան», Կ. 11, Երևան, 1985, Բ. Մաթևոսյան, Տավուշ, էջ 599:

⁵ Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 420:

⁶ Կ.Ավետիսյան, Աշխարհագրական անունների լոգոգրաֆիկական բառարան, Երևան, 1969, էջ 263:

⁷ Մ.Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 321, 330:

⁸ Մ.Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 432, «Ազգագրական եանդես», Գ. VII–VIII, Թիֆլիս, 1901, էջ 331:

կան թվականներին⁹: Հայտնի է նաև, որ Շամ-
շադինից տեղաշարժ է եղել նաև դեպի
Լոռի¹⁰:

Տավուշի գավառի վերջին վերաբնակե-
ցումը կատարվել է 1799թ., ըստ ուսաց
Պավել կայսեր հատուկ հրովարտանի, որի
համաձայն Ղարաբաղի և Գանձակի մի շարք
իշխանավորներ իրենց ժողովրդով տեղա-
փոխվեցին Լոռու, Ղազախի և Շամշադինի
շրջանները: Մեծ եղեռնից հետո զգալի թվով
արևմտահայեր նույնպես եամալրեցին Տա-
վուշի բնակչության կազմը:

Հաճախակի տարաբնակեցումների ու
տեղաշարժերի հետևանքով Տավուշի ազգա-
բնակչության կազմը պարբերաբար ենթարկ-
վել է փոփոխության: Քանի որ տեղա-
շարժերը եիմնականում Ղարաբաղ-Գանձակ-
Տավուշ-Շուլավեր-Տավուշ փակ շրջանով է
կատարվել, ի տարբերություն Հայաստանի
մյուս շրջանների, այստեղ բնակչությունը
ազգագրորեն միատարր է և ավանդապահ:
Եթե անցյալ դարում տեղաշարժերը պայմա-
նավորված էին թշնամիների հարձակում-
ներով, ավարառությամբ, համաճարակնե-
րով ու սովով, ապա մեր օրերում նկատե-
լիորեն ակտիվացել են մերձակա գյուղերի և
բնակավայրերի ներքին փոխտեղաշարժերը՝
կապված տնտեսական վերելքի հետ:
Հասկանալի է բնակչության երիտասարդ
տարիքային խմբերի կողմից կատարվող
եռսքը փոքր բնակավայրից դեպի մեծերը,
որը նպաստում է քաղաքների երիտասար-
դացմանը և գյուղական բնակավայրերի
ծերացմանը¹¹: Այս հանգամանքը, անշուշտ,
առանձնահատուկ նշանակություն ունի
բանահյուսության որակի և վիճակի համար:

Հաշվի առնելով բոլոր տեսակի տեղա-
շարժերն ու տարաբնակեցումները, Տավուշի
պատմաազգագրական տարածքում ներկա-
յումս կարելի է տարբերակել ազգաբնակ-
չության երեք շերտ. ա) տեղաբնիկներ (Շահ
Աբասի գերեվարությունից հետո մնացած-

ների սերունդներ), բ) XVIIIդ. վերջերին
վերաբնակեցված ղարաբաղցիների ու գան-
ձակեցիների սերունդներ, գ) 1915-20թթ.
գաղթած արևմտահայեր:

2

Տավուշի պատմաազգագրական շրջա-
նում կա 16 բնակավայր, որտեղ ապրում է
ավանդապահ, ուրույն սովորույթներ ու
կենցաղ, հարուստ բառուբան ունեցող,
լեզվով միաձույլ և ազգագրորեն միատարր
ազգաբնակչություն, որի հոգևոր մշակույթն
ու բանահյուսական ավանդները մինչև այժմ
հավուր պաշաճի չեն հետազոտվել:

Հիշյալ ազգագրական շրջանի ժողովրդ-
դագիտական ուսումնասիրությունը սկսվել է
XIX դարի վերջին տասնամյակներից, իբրև
հետևանք այն մեծ շարժման, որի հիմնա-
դիրն է Գ.Սրվանձոյանը: Տավուշում բանա-
հյուսական առաջին գրառումները կատարել
են ուսուցիչ Մատթեոս Մուրադյանը (1882թ.)
և տիրացու Վարդան Տեր-Հարությունյանը
(1884թ.), որոնք, արձագանքելով հայ անվա-
նի ժողովրդագետ և այլ գործի լավագույն
կազմակերպիչ Տ.Նավասարդյանի կոչին՝
հիշյալ շրջանից գրառել են բանահյուսական
արժեքավոր նմուշներ¹² (խաղիկներ, շուուա-
սելուկներ, հանելուկներ, երգեր, գվարձա-
խոսություններ): Երգերից լավագույնները
հրատարակվել են Տ.Նավասարդյանի կու-
մից¹³: Արժեքավոր է Վարդան Տեր-Հարու-
թյունյանի գրառած գվարձախոսություն-
ների ձեռագիր ժողովածուն, որը պահվում է
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի բանահյուսության արխի-
վում¹⁴:

Հայաստանում խորհրդային կարգեր
հաստատվելուց հետո, 30-ական թվական-
ներին շրջանից երգային բանահյուսական
նմուշներ է հավաքել հայտնի երգահան-րա-
նահավաք Ռոմանոս Մելիքյանը, իսկ 1945թ.

⁹ «Ազգագրական եանդես», գ. IX, Թիֆլիս, 1902, էջ 201:

¹⁰ «Ազգագրական եանդես», գ. VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 350:

¹¹ Ռ.Կառուպետյան, Միգրացիան և եթնիկ պրոցես-
ները ՀՍՍՀ-ում, Երիտասարդ գիտնականների կոնֆե-
րանս՝ նվիրված Լենինի ծննդյան 110-ամյակին,
գեկուցումների թեզիսներ, Երևան, 1980, էջ 17:

¹² Նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխի-
վում, Տ.Նավասարդյանի ֆոնդում, FBI: 2459-2542 և FBI:
2204-2275 եամարների աակ:

¹³ Մ.Մուրադյանի գրառումները ապագրվել են Տ.Նա-
վասարդյանի «Հայ ժողովրդական եեքիաթներ», VIII
գրքում, Թիֆլիս, 1894:

¹⁴ FBI: 2459-2542, Վ.Տեր-Հարությունյան, Շամշա-
դին, 1884:

ավանդություններ, գրույցներ ու հեքիաթներ է գրառել բանահավաք Սարգիս Իսրայելյանը:

1960-ական թվականներին Շամշադինի շրջանի գրեթե բոլոր գյուղերում բանահյուսական հետազոտություններ է կատարել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահավաք Արագ Կարապետյանը և գրառել հայ բանահյուսության տարբեր ժանրերի նմուշներ: Գրառված հեքիաթների մի մասը լույս է տեսել «Հայ ժողովրդական հեքիաթների» VI հատորում (1973թ.):

Վերջին երկու տասնամյակում ժողովրդագիտության տարբեր ճյուղերի ներկայացուցիչներ՝ ազգագրագետներ, բանագետներ, բարբառագետներ, երաժշտագետներ բուռն հետաքրքրություն են դրսևորել Տավուշի ազգագրական, բանահյուսական, երաժշտական և բարբառային նյութերի նկատմամբ: Նրանց թվին է պատկանում նաև տեղերիս հեղինակը:

Նպատակ ունենալով ամբողջացնել շրջանի բանահյուսական արժեքների կենցաղավարման պատկերը՝ 1977-86թթ. Շամշադինի շրջանում հետազոտել և գրառել ենք մեծաքանակ ժողովրդագիտական նյութեր, որոնք այժմ պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում (FEI: 0001-9999, է.Խենյանի ֆոնդ): Ֆոնդում պահվող նյութերը կազմում են 3360 միավոր, որոնց մեջ ընդգրկված են հեքիաթներ, գրույցներ, ավանդություններ, գվարձախոսություններ, ստեր, երգեր, սգերգեր, խաղիկներ, հանելուկներ, առած-ասացվածքներ, անեծքներ, օրհնանքներ, բարեմաղթություններ, շուտասելուկներ, հեքիաթի պատումնային սկսվածքներ, ծաղախոսություններ, աղոթքներ և այլն:

Բանահյուսական նյութին գուզահեռ գրառել ենք նաև ազգագրական-ժողովրդագիտական նյութեր՝ ծիսատոնական նկարագրություններ, ժողովրդական հավատալիքներ, որոնք ոչ միայն սերտորեն կապված են բանահյուսության հետ, այլև՝ առանձին վերցրած, ժողովրդագիտական կարևոր արժեք ունեն և ամբողջացնում են Տավուշի հոգևոր մշակույթի պատկերը:

• Է.Խենյանի գրառած բանահյուսական նյութերի արխիվավորումը և ժողովածուի աղյուսակների կազմումը կատարվել է ըստ բանասիրական գիտությունների դոկտոր Իսիդոր Լևինի կողմավորման և քանակական վերլուծությունների համակարգի:

Նյութերը գրառել ենք Շամշադինի շրջանի բոլոր բնակավայրերից՝ ընդգրկելով բանասացների գրեթե բոլոր սեռատարիքային խմբերը, իհարկե նախապատվությունը տալով սեռատարիքային բարձր խմբերին, իբրև բանահյուսական նյութի հիմնական կրողների: 1977-86թթ. ընթացքում նյութեր ենք գրառել 206 բանասացից, որոնցից 40 %-ը տղամարդ և 60 %-ը կին բանասացներ են (աեն սղյուսակ 1):

Կին բանասացների գերակշռությունը պայմանավորված է ոչ թե բանահավաքի սեռով, այլ բանահյուսական նյութերի՝ նրանցից գրառված տեսակներով: Վարդավառի ծեփի, լառիկների, սգերգերի, երգերի, հմայական աղոթքների, շուտասելուկների, անեծքների, հանելուկների, բարեմաղթությունների ու փաղաքշական խոսքերի կրողներն ու գիտակները մեծ մասամբ կանայք են, չեն բացառվում նաև տղամարդիկ¹⁵:

Տրվածարդ բանասացների թիվը թեև համեմատաբար փոքր է, բայց գրառված նյութի արձակ-պատմողական ժանրերի՝ հեքիաթների, ավանդությունների, գրույցների, գվարձախոսությունների քանակով, որ հիմնականում նրանցից է ձայնագրվել, առաջնակարգ տեղ է գրավում:

Բանասացներ ընտրելիս սկզբում առաջնորդվում էինք սեռատարիքային բարձր խմբի պատկանելությամբ և գրագիտության մակարդակով՝ հնարավոր անճշտություններից խուսափելու համար: Դա երևում է ներկայացված աղյուսակից: Նյութի գրառման ընթացքում պարզվեց, որ ավանդական նյութը, հատկապես որոշ ժանրեր (անեծք, առած-ասացվածք, ավանդություն, գվարձախոսություն) ակտիվորեն փոխանցվում են ավագ սերնդից միջին և կրտսեր սեռատարիքային խմբերին: Ներկայացված աղյուսակից երևում է, որ 60-ից բարձր տարիք ունեցող բանասացների թիվը 147 է:

¹⁵ Կին բանասացների եեա աշխատելը սովորաբար դժվար է. դա պայմանավորված է նրանց կենցաղային եռզներով ծանրարեռնված լինելով, իմացած նյութի յիարժեքության նկատմամբ քերաեալառ վերաերմունքով, րագում վշաեր տեսած լինելու եանգամանքով, որոնք նաեալեաական մտայնությանը արգելք են դնում նրանց խոսքի վրա, օտարի աչքին քեթևամխտ չերևալու միտամով: Մեր այն եարցին, թե իր երիտասարդության աարիներին հն, երգեր էին ընդունված և ինչ էին երգում, 95-ամյա Օսան Հակոբյանը-սլաուասխանեց. «Ի՞նչ երգիլ, ես եու ամառակ չի, ամառակնին ին երքըմ» (FEI: 6275-6276, Բերդ, 1984թ.):

Նյութերի գրառման ընթացքը ցույց ավեց, որ բանասացների երկացանկը պայմանավորված է ոչ միայն նրանց նախասիրություններով ու իմացությամբ, այլև որոշակի լսարանի առկայությամբ և նրա պահանջմունքներով: Օրինակ, Բերդում Տավուշ գետի աջ ափին գտնվող ծերունիների հավաքատեղին ունի իր որոշակի ավանդույթները: Այնտեղ բանասացները հանդես են գալիս որոշակի երկացանկով, այն է՝ հուշապատումներ, հեքիաթներ, սիրավեպեր, գվարճախոսություններ: Հավաքատեղին իր շուրջն է համախմբում նաև երիտասարդներին, որոնք հաճույքով ունկնդրում են տարեց բանասացների պատումները: Այս հավաքատեղիի լավագույն ու սիրված բանասացներից են Աբբահամ Գրիգորյանը, Կոստի և Արսեն Պապյանները, Լևոն Վիրաբյանը, Մուշեղ Աղամյանը, Ղազար Աբգարյանը և ուրիշներ:

Առաջին տաղիներին գրառած նյութերն ընդգրկում էին ավանդական բանահյուսության արձակ-կատմողական տեսակները, իսկ քնարական և բանաձևային փոքր ժանրերը դժվարությամբ էին գրառվում: Այդ բացը լրացնելու համար ջանքեր գործադրեցինք ոչ միայն համապատասխան բանասաց, այլև ժանրերի համապատասխան կենցաղավարման միջավայր և լսաբան գտնելու ուղղությամբ: Առաջին փորձը կատարեցինք 1983թ. Նորաշեն գյուղի մանկապարտեզի աշխատողների մեջ: Բանասացները բացառապես կանայք էին և պատկանում էին 4, 5 և 6 սեռատարիքային խմբերին, ունեին միջնակարգ ու միջնակարգ-մասնագիտական կրթություն: Ստացված արդյունքն անսպասելի էի. ծայնագրված նյութերի հիմնականում քնարական և բանաձևային փոքր տեսակներին էին պատկանում (սգերգ, առած-ասացվածք, խաղիկ, անեծք, աղոթք): Փորձը կրկնեցինք 1984թ. Թովուզ և Վերին Կարմիրաղբյուր գյուղերում, և դարձյալ արդյունքը խիստ գոհացուցիչ էի:

Բանասացների սեռատարիքային ռազմազանությունն իր հետ բերում է նաև գրագիտության աստիճանի բազմազանություն: Ավագ սերնդի ռանասացները (մինչև 1910թ. ծնվածներ), որպես կանոն, անգրագետ են կամ կիսագրագետ, որը պայմանավորված է եղել նրանց սոցիալական և կենցաղային վիճակով: Խորհրդային կար-

գերի հաստատումից հետո անգրագիտությունը վերացնելու նպատակով ռացված լիկկայանների շնորհիվ մեր բանասացների մի մասը դարձել է տառաճանաչ ու գրագետ: Միջին և կրտսեր սերնդի բանասացներն ունեն յոթնամյա, միջնակարգ և ռարձրագույն կրթություն: Բանասացների կրթական մակարդակի պատկերը հետևյալն է՝ 32 անգրագետ, 32 կիսագրագետ, 30 գրագետ, 21 միջնակարգ, 7 յոթնամյա, 4 միջնակարգ-մասնագիտական և 9 բարձրագույն կրթություն ունեցողներ: Բարձրագույն կրթությամբ բանասացները հիմնականում ուսուցիչներ են, կա նաև մեկ գյուղատնտես:

Բացառությամբ հինգ ռանասացի (Աբրահամ Գրիգորյան, Աարգիս Թութունջյան, Ժիլայր Խարազյան, Ավետ Աելքունյան, Արամ Միսկարյան), մյուսները ծագումով Շամշադինից են, և նրանցից գրառվել են ավանդական բանահյուսության նմուշներ՝ Շամշադինի խոսվածքին յուրահատուկ համ ու եռտով, դարձվածներով ու համեմատություններով: Բոլոր նյութերը ծայնագրվել են, որը հնարավորություն է ավել պահպանելու թե՛ խոսվածքի և թե՛ բանահյուսական նյութի առանձնահատկությունները:

3

Շամշադինի շրջանից գրառած բանահյուսական 3360 միավորից այս ժողովածուում խիստ ընտրությամբ ընդգրկվել է 1371 միավոր, որոնց կրողներն են 135 բանասաց (78-ը՝ կին, 57-ը՝ տղամարդ):

Ժողովածուում բանահյուսական նյութերն ամփոփված են երեք խոշոր բաժանումներում՝ վիպական, քնարական և բանաձևային բանահյուսություն: Տավուշի պատմաագագագական շրջանը հատկանշվում է վիպական բանահյուսության ավանդական տեսակների առատությամբ և բազմազանությամբ: Դրանց մեջ պատկանելի թիվ է կազմում հեքիաթը: Գրառված հեքիաթների մեջ հանդիպում են դրանց գրեթե բոլոր տարատեսակները՝ հրաշապատում, իրապատում, հեքիաթ-հանելուկ, ինչպես նաև արևելյան հեքիաթ-սիրավեպերի հայկական տարբերակներ («Շահ Իսմայիլ», «Աղվան Օսան», «Աշուղ Ղարիբ», «Դհար Միրզա», «Քյոռ Օղլի», որոնք, սակայն, ժողովածուում չեն ընդգրկվել):

ԲԱՆԱՍԱԳՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԸՍՏ ԱՆՈՒՍԱՐԻՔԱՅԻՆ ԽԱԲԵՐԻ

Գրառման տարեթիվը	Նյութերի քանակը	Բանասացների սեռը	Բանասացների սեռատարիքային խմբերը									Բանասացների ընդհանուր թիվը	Տոկոսային հարաբերությունը
			8-15	16-20	21-29	30-39	40-49	50-59	60-69	70-79	80-89 և ավելի		
			1	2	3	4	5	6	7	8	9		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1977	109	m	2				3	1		5	1	12	52
		f			1		3	2	3	1	1	11	48
1978	158	m						2	2	6	3	13	86
		f						1		1		2	14
1979	214	m						1		1	3	5	42
		f							1	3	3	7	58
1980	143	m									1	1	33
		f						1		1		2	67
1981	116	m						1		2	2	5	62
		f					1	1	1			3	38
1982	177	m						1		1	3	5	42
		f					1		2	2	2	7	58
1983	621	m						1		1		2	8
		f			2	1	3	4		5	8	23	92
1984	1225	m					1	2	1	6	8	18	26
		f	2		2	4	3	6	6	13	16	52	74
1985	613	m					1	1			12	14	52
		f						4	3	3	3	13	48
1986	284	m							2	2	4	8	73
		f								1	2	3	27
ԸՆԴՀԱՆՈՒՄ	3660	m										83	40
		f										123	60

Գրառված հեքիաթների թիվը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել Տավուշի հեքիաթներին բնորոշ պուժենների և մոտիվների մասին: Կան հեքիաթային այնպիսի սյուժեներ, որոնց ասարբերակները պատմվում են գրեթե բոլոր գյուղերում, նմանօրինակ սյուժեներից են՝

ա) սոսկ աղջիկներ ծնած կինը նորածնի պատճառով նոր անպատվություն չկրելու համար տնից հեռանում է, և մորը հետևած միջնեկ աղջիկը իմանում է նորածին ելբոր ճակատագրի մասին ու փրկում եղբորը:

բ) Վատ հարևանների պատճառով լեռներում ապաստանած ամուսիններին աղջիկ է ծնվում: Ծնունդն ընդունող ոգիները նրան օժտում են բացառիկ շնորհներով: Նա դառնում է արքայազնի կին և ենթարկվում բազմաթիվ վտորկությունների (նման սյուժեով հեքիաթներ ժողովածուում չեն ընդգրկվել):

գ) Անժառանգ թագավորը դերվիշի օգնությամբ երկվորյակներ է ունենում, որոնցից մեկին դերվիշը տանում է, և թագավորազնը փորձությունների է ենթարկվում (այս սյուժեն նույնպես չի ընդգրկվել ժողովածուում):

դ) Քաջագն հերոսը սպանում է դևին և մոր հետ բնակվում նրա տանը: Մայրը կենդանացնում է դևին, կապվում նրա հետ և որդուն վերացնելու նպատակով ուղարկում է դժվար իրագործելի անմահական ջուր և անմահական խնձոր բերելու:

ե) Դրամ վաստակելու գնացած հերոսին ընկերը սպանում է և ամուսնանում նրա կնոջ հետ: Կատարված ոճրագործությունը բացահայտվում է կոծոծի միջոցով:

զ) Կնոջ ծնողներին այցի գնացող ամուսինները գիշերում են ավագակի մոտ: Կինը ավագակին հրահրում է սպանել ամուսնուն, սակայն նա, ուշքի գալով, սպանում է ավագակին և անհավատարիմ կնոջը հանձնում ծնողների դատին:

է) Խորթ մոր պահանջով հայրը տնից հեռացնում է իր աղջիկներին և ձգում հորը, որտեղից նրանք հայտնվում են թագավորական ախոռում: Կբտսեր քույրը դառնում է թագուհի և վտորկոյան ենթարկվում նախանձ քույրերի կողմից:

ր) Ամուսինը անգգամ կնոջը հորն է գցում և այնտեղից հանու՜ ահաբեկված օձին, որի օգնությամբ հարստության տեր է դառնում:

թ) Կենդանիների լեզուն հասկացող ամուսինն իր գաղտնիքն ասելու համար դատապարտված է մահվան: Կինը պահանջում է հայտնել գաղտնիքը, և ամուսինը աքաղաղի խորհրդով ազատվում է կնոջից:

ժ) Աղքատ մարդը ընտանիքը պահելու համար մեկնում է հեռավոր վայրեր վաճառելու և առաջարկված «հարամ» ու «հալալ» աշխատավարձից գերադասում է քիչ, բայց «հալալ» վարձը և դեպքերի բերումով հարստանում:

ի) Հովիվը երազ է առնում գյուղացուց և գնում երազի հետևից: Երազն իրականանում է, և նա դառնում է լավ ընտանիքի տեր:

Վերոհիշյալ մոտիվներով հեքիաթային սյուժեները, նմանությունից բացի, երբեմն ունեն նաև էական տարրերություններ, որոնք պայմանավորված են բանասացի անհատական մոտեցումով, պատմելաոճով, այս կամ այն մոտիվին նախապատվություն տալով, որը և առաջ է բերում տարբերակայնություն:

Մեծ խումբ են կազմում ավանդական հրաշապատում հեքիաթները, որոնց մի մասն իր ամբողջականությամբ անհարիր է մեր օրերին: Առանձնահատուկ արժեք ունի «Արա Գեղեցիկ» հեքիաթը, որի ցարդ հայտնի միակ տարբերակը դարասկզբին գրառել է Երվանդ Լալայանը և հրատարակել «Ազգագրական հանդեսի» IX գրքում: Այդ պատումը Լալայանը գրառել է Ուզունլարում, կարնեցի հարյուրամյա ծերունի Ասիակ Ասֆարյանից, որը այն լսել էր Մուշ քաղաքում: Այն գրառած տարբերակի բանասաց Տիգրան Բաբասյանը հեքիաթը լսել է վասպուրականցի Արշակ Ռաջոյանից, 50-ական թվականներին, հետևաբար երկու դեպքում էլ պատումն իր ծագումով սերում է Արևմտահայաստանից: Երկու տարբերակների համեմատությունը բացահայտում է և՛ ընդհանրություններ, և՛ տարրերություններ: Ի տարբերություն առաջինի, մեր գրառած տարբերակում գերակշռում են հեքիաթներին բնորոշ հրաշապատում իրադրությունները: Այս հեքիաթը կարուտ է լուրջ ուսումնասիրության, իբրև վիպական պատումից հեքիաթին անցնելու բնորոշ օրինակ:

Հայկական հրաշապատում հեքիաթների ամենահայտնի և տարածված պուժենները

գրեթե ամբողջությամբ դրսևորվում են Տավուշի հեքիաթների հարուստ երկացանկում:

Տավուշում հանդիպում են նաև հեքիաթներ, որոնց սյուժեներն ունեն գրքային ծագում, սերում են Աստվածաշնչից և «Վարք սրբոցից»: Այդ տեսակետից ուշագրավ են «Վաղինակի ու Բենյամինի հեքիաթը» (բանասաց՝ Սամսոն Բաբայան), որը Հովսեփ Գեղեցիկի աստվածաշնչյան ավանդագրույցի մի յուրօրինակ ժողովրդական վերապատումն է և «ճակատագրի հեքիաթը»՝ ըստ «Վարք սրբոցի»:

Գրառված հեքիաթների մեջ զգալի թիվ են կազմում այն հեքիաթները, որոնց զխավոր հերոսը պատմական նշանավոր անձ է: Պատմական անձի վիպական կերպավորումով հանդես են գալիս հին աշխարհի մեծագույն գորավար Ալեքսանդր Մակեդոնացին (Իսկանդար Ձուլդարի) և Պարսից ինքնակալ Շահ Աբասը: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներն ունեին աշխարհակալական նկրտումներ, սակայն աշխարհակալի մտքով իսկ չէր անցնի, որ ինքը կդառնա Արևելքի բազմակրոն և բազմալեզու ժողովուրդների բանահյուսության վիպական-առասպելական կերպարներից մեկը¹⁶ և դրանով կնվաճի աշխարհը: Ալեքսանդր Մակեդոնացու առասպելական կերպարի տարածմանը մեծապես նպաստեց Կեղծ-Կալիսթենեսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», որի հիման վրա առաջացան տարբեր գրույցներ ու ավանդություններ և լայնորեն տարածվեցին ամբողջ Արևելքում: Ալեքսանդրյան սյուժեներից մեկը հայ վիպական ավանդության մեջ տարածված Ալեքսանդրի մահվան կանխագուշակման և նրա մահվան մոտիվն է, իսկ նյութը՝ բարոյախրատական մի գրույց, որտեղ դաբբնի կինը ծվի միջոցով դաս է տալիս աշխարհակալ թագավորին մաքրու արտաքին տեսքի ու ֆիզիկական հնարավորությունների մասին՝ հասկացնելով նրա հեղինակության պահպանման անհրաժեշտությունը:

Պարսից Աեֆյան ոհմաստիայի ինքնակալ Շահ Աբաս I-ը, որի ասպատակությունների ու ռոմագաղթերի գոհը դարձավ հայ

ժողովուրդը, թե՛ պատմական և թե՛ վիպական բանահյուսության մեջ հանդես է գալիս երկակի ընկալությամբ¹⁷: Շահաբասյան սյուժեների առատությունը հայ և մասնավորապես Տավուշի բանահյուսության մեջ՝ Շահ Աբասի վարած քաղաքականության արդյունքն է: Մեծ ռոմագաղթից և հայերին Պարսկաստանում վերարձակեցնելուց հետո նա տարրեր արտոնություններ է շնորհում հայերին, ինչպես օրինակ՝ կրոնական անկախություն, եկեղեցիներ կառուցելու թույլտվություն, հովանավորում արհեստներն ու առևտուրը, որով և շահում է ժողովրդի համակրանքը, բայց միևնույն ժամանակ դաժան դատաստան էր տեսնում անհնազանդների ու օրինազանցների հետ, ծանր հարկեր դնում ժողովրդի վրա: Իդ այս երկկողմանի արարքներով նա դառնում է խոսք ու գրույցի առարկա, ապա մուտք գործում ժողովրդական բանահյուսության մեջ, որտեղ իդեալականացվում է և օժտվում վիպական գծերով: Վիպական բանահյուսության մեջ Շահ Աբասին վերագրվել են թե՛ իրական պատմական հիմք ունեցող ընկալության գծեր ու դեպքեր, թե՛ ընդհանուր վիպական բնույթի հատկանիշներ:

Տավուշից գրառված շահաբասյան սյուժեներում առկա են գրեթե այն բոլոր մոտիվները, որոնք հանդիպում են Շահ Աբասին վերաբերող համահայկական սյուժեներում: Ըստ այդ հեքիաթների, Շահ Աբասը և՛ իմաստուն է ու արդարադատ, և՛ միաժամանակ դաժան է ու խորամանկ: Գրառված նյութերի մեջ մի քանի տարբերակով հանդիպում է Շահ Աբասի կողմից կանանց ցեղը ոչնչացնելու հայտնի մոտիվը: Ուշագրավ է նաև այն մոտիվը, երբ կնոջ սերը թևավորում է ամուսնուն, և շահն այդ հանգամանքը գնահատում է ըստ արժանվույն:

Շահաբասյան սյուժեների մեջ ուրույն տեղ ունի «Ռափայել բիժեն» հեքիաթը, որը մեր դիտարկած շահաբասյան սյուժեների մեջ տարբերակներ չունի և բացառություն է կազմում¹⁸:

¹⁷ Տե՛ս Զ.Դ.Ջեմչյան, Образ Шаха Аббаса в армянском эпическом фольклоре. Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований. Тезисы докладов, Ереван, 1978, с. 232-233.

¹⁸ «Ռափայել բիժեն» հեքիաթը ծավալի պատճառով ժողովածուից լուրջ է մնացել: Այն պահվում է ՀՀ ԳԱԱ

¹⁶ Տե՛ս Է.Խենչյան, Ալեքսանդր Մակեդոնացին հայ վիպական բանահյուսության մեջ, Երիտասարդ գիտնականների VI կոնֆերանս (գեկ. թեզիսներ), Երևան, 1984, էջ 43-44:

Հայտնի է, որ հեքիաթի գործողությունները կատարվում են հեքիաթային տարածության և ժամանակի մեջ¹⁹, այսինքն մի թագավորություն, քաղաք, գյուղ, լույս ու մութ աշխարհ, որոնք իրական, տեսանելի աշխարհ չեն, այլ մտացածին, երևակայական և մի ժամանակարմբացք, որը եղել կամ չի եղել: Այդ ընթացքում հերոսները շատ արագ մեծանում են, արագ տեղից տեղ են գնում, և հեքիաթային տարին էլ, կարծես, մեկ ականթարթի է հավասար: Օրինակ՝ «Ասված խոսկ ա, հեքիաթի ըրելսերը միշտ շուտ են մեծանում, հեքիաթընդ դժվարությունները կարճ ա ըլրմ»:

Երբեմն բանասացները տեղայնացնում են հեքիաթները, համեմատում իրենց շրջակա միջավայրի հետ կամ օգտագործում իրենց ծանոթ տեղանունները, ձգտելով դրանով հավաստիության պատրանք ստեղծել: Օրինակ՝ «Իրան ուղղությունն է Մուղղուզն²⁰ ա, թե Ալրուզն²¹ ա, գիղըն չեն»²², կամ «Հմի խագողին ի՞նչ ա գիղըն Հացուտ տախտր վրերդի՞ յա. Արդամա վրա յա, Ըրչոքարի՞ վրա յա, թե հլե Նավուրի՞²⁴ վրա յա» (5/5), կամ «Քյնացին տուս եկան էս Կարմիր յալի՞²⁵ պես մի յալ»²⁶:

Տավուշի ավսնդական հեքիաթներին ևս ընդորոշ են հեքիաթային կայուն բանաձևերը, որոնցով սկսվում և ավարտվում են հեքիաթները: Կայուն բանաձևերն ավելի հաճախ ու մեծ քանակով օգտագործում են վարպետ հեքիաթասացները (Ար.Գրիգորյան, Տ.Բարասյան, Ե.Երիցյան և ուրիշներ): Հեքիաթները սկսվում են որոշակի սկսվածքով, օրինակ՝ «ըլըն ա, ըլրմ չի», «ըլել ա, չըլել մի...», «ըլել ա մի թաքավոր» և այլն: Երբեմն հեքիաթը կարող է ունենալ երկարաշունչ

նախաբան՝ կախված հեքիաթասացի անհատական ծիրքից, վերաբերմունքից: Այսպես օրինակ՝ «Ես ուզում եմ, ժողովուրդ ջան, էս որագույն մի քիչ գրադեցնեմ, խագողու հեքիաթը պատմեմ: Խագողին մի նիենց դժբախտ տղա յէր, ըայց վերչոմը լավ, ուժեղ ըախտավորվեց: Տաք սաղ ըլեք ինձ լսեք, ես էլ սաղ ըլեմ գոնյե եքոյաթս տեղաց անեմ՝ բոլորին ըախտավորություն ցանկանամ» (5/5):

Առկորարար ավանդական բանաձևը նախ հաստատում է. «ըլել ա», ապա անմիջապես էլ ժխտում է եղածը. «չի ըլել»՝ այսպիսի երկրայական բանաձևով են սկսվում հրաշապատում հեքիաթները: Իրապատում հեքիաթների սկսվածքը հաստատական իմաստ ունի, օրինակ՝ «Մի տերտեր ա ըլում», կամ «Մի շատ հարուստ մարթ ա ըլում» և այլն: Իսկ պատմական անձանց մասին հեքիաթային գրույցների սկսվածքներին բնորոշ չեն հաստատումն ու ժխտումը. հեքիաթի սկիզբը նախապես մատնանշում է, որ այն առնչություն ունի իրական պատմական անձի եետ: Այսպես. «Ձուլդար Իսկանդարը թաքավոր ա ըլել իր ժամանակին» (37/37), կամ «Շահ օղլի Շահ Աբագր ու իրան վագիրը քյնրմ են ման կյալ» (43/43), «Շահ օղլի Շահ Աբագր էնպսի թաքավոր ա ելել» (42/42), «Շահարագր հին ժամանակներում դավրիշի դոն մտնիլիս ա ըլել ու...» (41/41) և այլն: Այս տիպի հեքիաթների վերջաբան բանաձևը ևս յուրօրինակ է և տարբերվում է մյուս հեքիաթներին ընդորոշ կայուն բանաձևերից, օրինակ՝ «Դե նիանք էլ ուլք ըլեն, ղոլորմի պատմուրներին էլ, տուք էլ երկար կյանք ունենաք, վրեր ինձ լսեցիք» (FEI: 4245 – 5371), կամ «Այ էդպիսի վրենց վրեր ասած բարեխիղճ թաքավոր ա եղել, վրեր նա իրեն աչկովր տեսել ա, անգաճովր լսել ա, նոր արել» (38/38), կամ «Էտ էլ մեր Շահ օղլի Շահ Արասր» (42/42) և այլն:

Հրաշապատում հեքիաթների վերջաբան բանաձևում ի հայտ է գալիս հեքիաթի ռարեհաջող ավարտը, ռարու հաղթանակն ու չարի պարտությունը. «Նրանք հասան իրանց մուրագին, տուք էլ հասնեք ծեր մուրագին» (9/9), կամ «Ըստծանի թող օխտր խնձոր վեր ընգնի» (12/12), կամ «Ըստծանից իրեք խնձոր վեր ընգնի» (3/3): Իսկ իրապատում

ենսագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում FEI: 4245 – 5371:

¹⁹ Водерникова Н.М., Русская народная сказка, Наука, Москва, 1975, с. 37.

²⁰ Մուրղուզը լեռնագագաթ է Մուրղուզի լեռնաշղթայում, ռարձրությունը՝ 2993 մ, գնվում է ՀՀ Տավուշի մարզում:

²¹ Ալրուզ-Տավուշում այդպիսի են անվանում Կովկասյան լեռնաշղթայի Էրրուս լեռնագագաթը:

²² FEI: 3117–3293, Տ. Բարասյան, Բերդ, 1979:

²³ Հացուտ աախտ, Արդամ, Ըրչոքար-խանդամասեր են Բերդ ավանի շրջակայքում:

²⁴ Նավուր-գյուղ ՀՀ Տավուշի մարզում:

²⁵ Կարմիր յալը խանդամաս է Բերդ ավանի մոտ:

²⁶ FEI: 0203 – 0242, Ար. Գրիգորյան, Բերդ, 1977:

հեքիաթները մեծ մասամբ ավարտվում են րարոյախրատական եզրահանգում րանա-
ծնով. «Ըստ իմ ղայդի շաշեր էլ կան էլի,
դիպի խելունք չեն» (FEI: 1653 – 1665), կամ
«Աշխարի պանը սրհենց կրլի, աու կիջնես՝
ես կրարծրանամ» (29/29), կամ «Խելք, այո,
աշխարքը խելքն ա սիրիւմ, րա նոր ե՞ս
գիղում» (28/28), «Նա յա հոր պապիվր
գիղում» (21/21) և այլն:

Կայուն րանաձևերի ռազմագանությանը
ու հարստությանը են հատկանշվում հե-
քիաթների միջնամասերը: Հեքիաթի գործո-
ղություններին գուզընթաց րանասացը, որ-
պես գեղարվեստական միջոց, օգտագոր-
ծում է պատմողական րանաձևեր: Միջան-
կյալ րանաձևերի մի մասը մատնանշում է
հերոսի ուղևորությունը անորոշ ճանա-
պարհով դեպի մի որոշակի նպատակակետ.
(«Կքյնա, շատ կքյնա, քիչ կքյնա, աստոծ
գիղա, կքյնա մի ճալս կանա» (FEI: 0911 –
0981), կամ «Շաա են քյնում, քիչ են քյնում,
քյնում են տենում մի մեծ սար» (5/5), «Վեր ա
կենում էս խագողին կյուլսը տրնում վեշումը,
ճամփա ընգնում» (5/5), «Ուխտ ու պայման
ըլի քյնամ» (14/14)):

Միջանկյալ րանաձևերի մի մասն ունի
դիմումի ընույթ, օրինակ դևի դիմումը
կրտսեր արքայագնին. «Է՛յ հողածին, օցն
իրան պորտով, դուշն իրան թևով ըսաի չի
եկել, էս ի՞նչ ես առ ման կյալի» (4/4), կամ
առևանգված աղջկա դիմումը արքայագնին.
«Է՛յ հողածին, սոված ես՝ հաց տամ, ծարավ
ես՝ ճուր տամ, ճամփեն շշկիլ ես քցել, արի
քեզ նշանց տամ, վեր կաց ըստեղից քյնա»
(4/4):

Բանաձևերի մի մասն էլ ցույց է տալիս
գործողության ընդհատում և տեղափոխում
(«Էս ախճիկը թոյ ըստեղ կենա, խարարը
տանք Արա Գեղեցիկիցը» (4/4):

Բանաձևավում է նաև հեքիաթի երոսի
որոշակի գործողությունը («Էս կնիկը ծունգը
տալին ա տընում, մի հատ գեղեցիկ տղա-
ըրեխա պիրում» (18/18), կամ «Էս քեզ
քշերով ի ման կյալի. առ ցիրեկով ես իմ
ճանգը ընգել» (FEI: 0911 – 0981):

Բնորոշ են նաև հեքիաթի գործողու-
թյունից ըստ միջանկյալ եզրակացություն-
րանաձևերը, որոնք ընույթով մոտենում են
առած-ասացվածքներին («Թուքը՝ թքովին,
մուրը՝ մրողին, ո՞վ կթքի իրան ծնողին»

(1/1), «Աման մարթ Հաջի Մուրադ չի տառ-
նալ, աման ցավի դիմանալ» (6/6), կամ
խոսքի հմայական ազդեցությամբ հեքիաթի
գործողությունները փոխելու ակնկալիքով
ասվող անեծքի րանաձևերը («Նրա սրվորց-
նողի աչկերը առաւ սյա» (1/1), կամ «Տրա
սրվորցնողի վիզը կոտրի» (1/1) և այլն):

Կայուն րանաձևերի օգտագործումը մե-
ծապես հարստացնում է հեքիաթների լե-
զուն, ոճը դարձնում վիպական ու պատ-
կերավիր:

Մեր գրառած հեքիաթներում դիտվում է
նաև նորարարությունների երևույթ, որը,
առաջին եերթին պայմանավորված է ավան-
դական միջավայրի րացակայությամբ: «Ա-
վանդական րանահյուսությունը, որպեսզի
կենցաղավարի ամրողը կենսունակությամբ,
ավանդական միջավայր է պետք»²⁷, մինչդեռ
ավանդական րանասացի առաջ խնդիր է ծա-
ռանում ժամանակակից ունկնդրին հասկա-
նալի դարձնել այնպիսի ծեսեր, սովո-
րություններ, կենցաղային առարկաներ, երևույթ-
ներ, որոնք վաղուց դուրս են եկել կենցա-
ղավարումից: Այստեղից էլ պատումի նկատ-
մամբ րանասացների մոտ երբեմն նկատվող
ակտիվ միջամտությունն ու նորա-
մուծությունը, ժամանակակից երևույթների
ետ գուգաեեոներ անցկացնելու նրանց
ձգտումը:

Տավուշի արծակ-պատմողական րանա-
հյուսության մեջ զգալի տեղ են գրավում
տարրեր ընույթի գրույցները, որոնց սեղմ
ծավալի մեջ ամփոփված են ժողովրդի կեն-
ցաղը, սովորությունները, ինչպես նաև մտա-
ծողության, հոգերանության, րարոյականու-
թյան չավանիշների դրսևորումները: Զրույց-
ները թեև համընդհանուր տարածում ունե-
ցող սյուժեներ են ամվոփում, րայց տեղա-
կան երանգավորմամբ տարբերակներն են:
Ուշագրավ է «Հոր խորհուրդը թաքավորին»
գրույցը (րանասաց՝ Ամսոն Բարայան), որի
աարբերակներից մեկը պահպանված է
միջնադարյան մատենագրության մեջ²⁸:

²⁷ Путилов Б.Н., Фольклорное наследие и современная культура. В кн. Русский фольклор, т. IX, Наука, М.-Л., 1964, с. 76–77.

²⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960, էջ ԾԳ, 46–50:

Ժողովածուի վիպական բանահյուսության բաժնում ներկայացված են նաև ավանդություններն ու հուշապատումները, որոնք ամբողջությամբ տեղական ծագում ունեն: Ավանդությունների մի մասում ստուգաբանվում են Տավուշի տեղանունները՝ Զորաթան, Տղատես, Ցրաատար, Ջաբուռի քար, իսկ մի մասն էլ վարքաբանական (պատմական) ավանդություններ են Առողմոնի, հայր Աբրահամի, Նաղիր շահի, Լենկ Թեմուրի, Գրիգոր Մանուչարյանի և այլոց մասին: Հուշապատումները, մեծ մասամբ, կապվում են անցյալ դարի պալոմական իրողությունների, կյանքի ու կենցաղի հետ:

Տավուշի վիպական բանահյուսության ամենասիրված ու տարածված տեսակներից է գվարձախոսությունը: Այս ներկայումս ամենակենսունակ ժանրն է, որի վրա թափվել է մեր արագ տարածմանը: Զվարճախոսությունը կամ անենդոտը գվարձալի պատմությունն է, ուր ծաղրի են ենթարկվում այնպիսի գանազան մութ կողմեր, կենցաղային ու մարդկային խոցելի հարաբերություններ: Տավուշն ունի իր հայտնի գվարձախոսները՝ ռեղոցի Սեդրակը, թովուզցի Կառապետ հայն ու Ավագ պապը, մորաշենցի Կյալուստ դային և վերջապես նշանավոր մովսեսցիները: Մովսեսը Տավուշի գյուղերից է, որի բնակիչների միամտությունն (շաշությունը) ու ծիծաղելի վիճակների մեջ ընկնելը հիմք են դարձել գվարձախոսությունների մի ամբողջական շարքի ստեղծման:

Տավուշում տարածված է նաև մուլա Նասրեդինի մասին անեկդոտաշարը: Ի տարբերություն տեղական գվարձախոսների շուրջ հյուսված անեկդոտների, որոնց կրողներն են երիտասարդ ռանասացներ, մուլա Նասրեդինի անեկդոտները պատմում են համեմատաբար տարեց ռանասացները:

Շրջանում մեծ ժողովրդականություն են վայելում նաև համընդհանուր տարածում ունեցող գվարձախոսություններ գծերի, քաչալի, անհաշտ ամուսինների մասին:

Ժողովածուի քնարական բանահյուսության բաժնում ներկայացված են Տավուշում շատ սիրված ու տարածված խաղիկները՝ («Ջան Գյուլումի խաղեր», «Վիճակի խաղեր») և տարբեր ընույթի երգեր: Խաղիկների գրառմանը գուգընթաց, գրի ենք առել նաև

վարդավառի ծեսը՝ իրեն ուղեկցող խաղիկներով ու բոլոր մանրամասներով: Գրառված խաղիկները տարրեր գյուղերում տարբեր մեղեդիներով են երգվում: Ի տարբերություն հեքիաթների, երգային բանահյուսությունը Տավուշում համեմատաբար աղքատ է, գրառված ու ժողովածուում ներկայացված երգային նմուշները հեռու են կատարյալ լինելուց: Տավուշի երգային բանահյուսության նմուշները բաղկացած են հայրենասիրական, աշուղական, սիրային, օրորոցային, կենցաղային երգերից ու սգերգերից:

Ժողովածուի ռանածևային բանահյուսության բաժնում ընդգրկված են առած-ասացվածքները, անեծքները, օրհնանքները, բարենաղթությունները, երդումները, հանելուկները, շուտասելուկները, հմայական աղոթքները, որոնք մինչև օրս կենցաղավարում են Տավուշի պատմաագագազական շրջանում:

Ինչպես այլուր, այս շրջանում նույնպես ամենատարածվածը առած-ասացվածքներն են, որոնք իսկապես կենսունակ են ու գործածական՝ շնորհիվ իրենց սեղմ ու պատկերավոր ոճի և իմաստի ընդհանրացնող հատկության: Տավուշի ժողովրդական առածները ճանաչողական մեծ արժեք ունեն և հաճախ արտացոլում են պատմաագագազական տարածքի բուսական, կենդանական աշխարհը, կենցաղը, սովորույթները, միջավայրը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, անգամ կոնկրետ անձանց և կատարված իրողություններ: Դրանցից է օրինակ՝ «Քիչ չի չինչինեցի ա, էն էլ Ազրգըլապի թաղեցի ա» առածը: (Չինչինը Տավուշի հեռավոր և կտրված գյուղերից է, իսկ Ազրգախայրը Չինչինի ամենահեռու և ցեխոտ թաղամասն է): Այս առածի հիմքում ընկած է հեռավորության և անմատչելիության գաղափարը՝ խարսխված կոնկրետ տեղավայրերի վրա:

Իրական ողոշակի անձնավորությունների հետ են առնչվում հետևյալ առածները. «Պետին կգիղա, թե աավարը դորն ա քընմ», «Գիղըն չի, թե ո՞վ ա մեռել.՝Վայ Վարթան ա կանչըն», «Գյագին ցորեն հացին սըվորել ա»: Գյագին գյուղի աղքատն է եղել, որը դարձել է ջրալացական:

Ժողովրդական հեքիաթների տարածված մոտիվներից մեկը՝ իմաստուն թռչունով (դուդի դուշ) թագավորի ընտրությունը, ռանածևումով մտել է ժողովրդական լեզվի մեջ,

դառնալով առած՝ «Մաշկուլ հավը կըլիսիս թառ դի անիլ» ձևով

Առած-ասացվածքների մեջ գգալի թիվ են կազմում Տավուշի և առհասարակ Հայաստանի նմանատիպ բնաշխարհին բնորոշ բույսերն ու կենդանիները, ինչպիսիք են դիցուք՝ «Շվաքի տակի շուշանը երկար կըլի», «Ցաքին գաա չի, համա վոնըմ ա», «Թիշն ի՞նչ ա, թե իրան խաշուն ինչ ըլի» և այլն:

Տավուշի բանավոր ավանդության հետաքրքիր դրսևորումներից է հանելուկը: Տավուշում հանելուկն անվանում են «քըթ-նովի» (Նավուր, Վ. Կարմիրաղբյուր), թրք. «թավմաջա» (Նորաշեն, Բերդ), «պունգլ» (Վարազավան): Հանելուկներն ունեն հարցական կայուն բանաձևեր. «էն ի՞նչն ա», «էն ի՞նչն ա, ինչը», «էն ի՞նչն ա, որ», երբեմն ասվում են նաև առանց այդ բանաձևերի: Անցյալում Տավուշում հանելուկը գուշակելիս գուշակորդը հանելուկ առաջարկուրից որևէ բան էր պահանջում, սովորաբար որևէ բնակավայր: Երբեմն այս պահանջը բանաձևված մտնում է հանելուկի կառուցվածքի մեջ, ինչպես՝

«Հապար ասեմ, հապար տմսեմ,
Հապար կեղ աու, վըբը քե ասեմ»:

Տավուշում մինչև վերջերս դիտվել է հանելուկը գուշակելու խմբային հնամենի սովորույթը, երբ կուլեկտիվ կոլտնեսային աշխատանքներն ուղեկցվել են եանելուկների առաջադրմամբ և գուշակությամբ, առանց սեռատարիքային սահմանավակման: Որոշ երկիմաստ և անպարկեշտ համարվող հանելուկներ կենցաղավարում են բանասացների նեղ շրջանակում, սոսկ կանանց կամ աղամարդկանց միջավայրում, և նման հանելուկների գրառումը շատ դժվար է, անկախ այդ եանիլուկների պատասխանների «անմեղ» լինելուց:

Բանաձևերի հաջորդ տեսակը անեծքներն ու օրենանքներն են, որոնք լայն կիրառություն ունեն Տավուշում: Այստեղ անեծքի ամենատարածված սիպը պարզ ու հակիրճ բանաձևերն են («Օխող պատան մաշես», «Մորու տակին շվաք անես», «Թալալընըտ ռեշնի» և այլն), որոնց գուգահեռ հանրիպում են նաև բարդ ու ծավալուն չափածո անեծքներ, ինչպես եետևյալը.

Քյնաս, քյնաս փըրըսող,
Կերածըտ ըլմը լսընեող,
Կըմշի պոգի պես կռանաս,

Իծի պոգի պես չորանաս,
Շաա անես՝ քիչ ուտես,
Քիչ անես՝ ոչ ուտես,
Քու ժուս քու ըմխովը վե քցես:

Պատմական կոնկրետ իրադարձությունների արձագանք են երիտասարդ աղջիկներին ուղղված հետևյալ անեծքները. «Լագ-գու կյվակին քյնաս», «Թուրքի կյվակին քյնաս», «Շորժեն անց կենաս»: Անցյալում հաճախ լեզգիներն ու թուրքերը Տավուշի լեռնաշխարհից աղջիկներ էին առևանգում²⁹, հատկապես Մուրղուզ սարի ամառանոցներից: Տրամարդիկ մինչև Շորժա հետապնդում էին առևանգիչներին, հասնելու դեպքում հետ էին բերում առևանգվածին, չհասնելու դեպքում՝ եետապնդողները Շորժայից վերադառնում էին:

Ավանդական անեծքների հիմքի վրա նոր առարկաների ու հասկացությունների օգտագործմամբ ձևակերպվում են նոր տարրերակներ, ինչպես օրինակ՝ «Աեյիդըտ ժեշտա յաշիկըմ պիըեն», «Ռուլըտ վորըտ մտնի» և այլն:

Տավուշում ընդունված է անեծքին հակադրելու համար հանդես գալ պատասխան բանաձևով, որը կամ պետք է ոչնչացնի, կամ էլ թուլացնի անեծքի ուժը: Ամենատարածված պատասխան բանաձևերն են՝ «Ինչ ասես՝ քեզ քյնա», «Օոցըտ ճըվալ աաոմա, մի քյնա», «Քիչ ընըծի, կաթն ըլըմ ա, իրան վրա վեր աաոնըմ»:

Օրինանքներն ու բարենախությունները Տավուշում կիրառվում ու կենցաղավարում են հաակապես եարսանյաց ծեսի ժամանակ: Օրենանք-բարենախություններում րացառապես շեշտվում է րարեկեցիկ ու երջանիկ կյանքով ապրելու, շնորհների ու հաջողությունների արժանանալու, րարի, ազնիվ ու արդար լինելու ցանկություններ («Կետի քան ումրրն ունենաս», «Դորը քյնաս՝ րախտավոր ըլես», «Միմը տընես՝ հագար վեր ունես» և այլն):

Տավուշում ցարդ պահպանվել են հնաշական արութների որոշ տեսակներ, որոնց գրառումը կապված է որոշակի դժվարությունների հետ: Յուրաքանչյուր աարեց բանասաց հավատում է աղոթքի հմայական

²⁹ Տավուշում աղջիկների առևանգման մասին ավանդություններ կան պահպանված: FEI: 3689-3693, Լ. Վիրաբյան, Բերդ, 1985:

ներգործությանը և պահպանում աղոթքն այլոց փոխանցելու ավանդական արգելք-հրահանգը: Տավուշում պահպանված հմայական աղոթքներից են գայլկապի, չար աչքի, հաշաքքի (ուշաթափության), մկնատամի, կարմիր քամու, գորտնուկի, ալմագի աղոթքները:

Գայլկապի, չար ոգիներից պաշտպանվելու, ալմագի աղոթքներն արդեն կենցաղավարումից դուրս են եկել, և գրառված նմուշները արդյունք են սոսկ առանձին տալեց բանասացների մաապահության, իսկ չար աչքի և որոշ հիվանդությունների դեմ ուղղված աղոթքներն այժմ էլ լայն կիրառություն ունեն և կենցաղավարում են երիտասարդ կանանց ու աղջիկների միջավայրում:

Աղոթքներն ուղեկցվում են որոշակի հմայական արարողություններով, որոնց նպատակն է առավել գորավիր դարձնել աղոթքի ազդեցությունը: Հմայական աղոթքներն ու դրանց ուղեկցող արարողությունները հմայական գորությամբ օժտված առանձին անհատների մենաշնորհն է: Նրանք իրենց մասնագիտական գաղտնիքները չեն հրապարակում, որպեսզի չկորչի խոսքի հմայական գորությունը: Յուրաքանչյուր աղոթող իրավունք ունի իր հմայական գիտելիքները փոխանցել միայն հակառակ սեռի յոթ անձնավորության: «Չար աչքի» աղոթքներին ուղեկցող արարողություններում կարևոր դեր են խաղում հմայողի թուքը և դանակը, որի մետաղյա շեղրը, ըստ ժողովրդական հավատալիքի, չեզոքացնում է ոչ միայն չար աչքի, այլև մնացած չար ոգիների ազդեցությունը: Որոշ հմայական աղոթքներ սկսվում և ավարտվում են «Հայր մեր» տերունական աղոթքով: «Չար աչքի» ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Տավուշում օգտագործվում են նաև զանազան հմայական պահպանակներ (աչքի ուլունքներ, վոշենու վայաից պատրաստված պահպանակ), որոնք նախապես ենթարկվում են որոշակի աղոթքներով ուղեկցվող ծիսական հմայագործման:

Ներկա ժողովածուն իր տարատեսակ ու բազմաբնույթ նյութերով ամբողջական գաղափար է տալիս Տավուշի պատմաագագրական շրջանի բանահյուսության արդի վիճակի մասին: Ժողովրդի ավանդապահու-

թյան շնորհիվ հիշյալ շրջանում դեռևս պահպանվում են ռանահյուսական մի շարք արժեքներ, որոնց մեծ մասի գրառումը համապատասխան միջավայրի բացակայության, աստիճանաբար մոռացման ու քայքայման պատճառով դարձել է չափազանց դժվար:

Մենք մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Տավուշի ավանդապահ հայ ազգարնակչությանը, ռազմաշնորհ բանասացներին, բոլոր նրանց, ովքեր տարիներ շարունակ մեզ օժանդակեցին, նպաստեցին բանահյուսական արժեքների հայտնաբերմանն ու գրառմանը:

*
* *

Մեր գրառած 3360 բանահյուսական միավորից ժողովածուում ընդգրկվել է 1371 միավոր: Ներկայացված նյութերը ծայնագրվել են 135 բանասացից, որոնցից 57-ը աղամաղդ են, 78-ը՝ կին: Ժողովածուում կազմելիս առաջնորդվել ենք Տավուշի ազգագրական շրջանին բնորոշ բանահյուսական տեսակները համեմատաբար ամբողջական ներկայացնելու միտումով: Նյութերը դասակարգել ենք ըստ բանահյուսական սեռերի ու տեսակների (վիպական, քնարական, բանաձևային), իսկ դրանց ներսում՝ ըստ ենթատեսակների և բնույթի: Քանի որ բանահյուսական բնագրերի մեծ մասը գրառված է ծայնագրիչով (բացառությամբ բանաձևային տեսակների), ուստի դրանց մեջ պահպանված են բանասացների ոճաբարբառային արտասանական բոլոր յուրահատկությունները, այդ թվում նաև լեզվական շեղումները, դեմքի ու թվի անհամաձայնությունները, դեպքերի շփոթումը, ետևառաջությունը և այլն: Բանահյուսական բնագրերի արժեքը պահպանելու նկատառումով ժողովածուի նյութերը վիճակագրության չեն ենթարկվել, չեն խմբագրվել, բանասացի թույլ տված շեղումներն ու սխալները թողնվել են նույնությամբ, միայն տողատակերին տրվել են համապատասխան ծանոթություններ: Եթե բանասացը որևէ բառ կամ դեպք անհրաժեշտ է համարել յուրովի բացատրել կամ մեկնաբանել, ապա համապատասխան տեղերում այն իջեցվել է տողատակ, կամ տեքստից առանձնացվել է փակագծերի միջոցով:

Ձգտել ենք պահպանել Տավուշի խոսվածքի բարրառային առանձնահատկությունները, յուրաքանչյուր բանասացի արտասանական յուրահատկությունները, որի հետևանքով բնագրերում երբեմն հանդիպում են նույն բառի երկու կամ ավելի արտասանական տարբերակ, ինչպես օրինակ՝ ոչխար, ռիճար, ախճիկ, ախճիկ, տուս կյալ, տուս կյալ և այլն:

Բանասացներից 5-ը, ծագումով, Հայաստանի այլ գավառներից են, տեղաշարժերի հետևանքով վերաբնակվել են Տավուշում և նրանց պատումների լեզուն ընդհանուրապես տեսակետից նի խառնուրդ է, որտեղ առկա է թե՛ Տավուշի խոսվածքի և թե՛ իրենց հայրենի

րարբառի հատկանիշները: Օրինակ՝ ռանասաց Արրահամ Գրիգորյանը, որը ծագումով Բուկանրիսի Նարային գյուղից է և 20 տարեկանից ապրում է Տավուշում, իր պատումներում միշտ չէ. որ կարողանում է պահպանել Տավուշի խոսվածքին բնորոշ ձայնավորի քմայնացումը կամ որոշիչ եոդի գործածությունը:

Որոշ անվերնագիր հեքիաթներ վերնագրվել են մեր կողմից և աստղանիշ են կրում:

Տողատակերին են ծանուցվել նաև որոշ ժանրեր ու ընագրեր լուսարանող, իմաստների ճշգրտող, կիրառման ժամանակն ու տեղը պարզարանող անհրաժեշտ բացատրություններ:

*

*

*

15271
A III


Սույն ժողովածուն ավելի քան տաս տարի ստատում էր տպագրության իր աստեղային ժամին: Այն սիրահոծար ստանձնեց ամերիկահայ բարերար, հայ գրքի սիրահար Հարություն Սիմոնյանը, որի հովանավորությամբ միայն վերջին երեք ասարում. Հայաստանում լույս է տեսել ավելի քան երեսուն գիրք՝ այդ թվում «Հայ ազգագրություն և բնահյուսություն» մատենաշարի վերջին 20-րդ և 21-րդ հատորները:

Ես իմ երախտագիտությունն ու շնորհակալությունն են հայտնում Հարություն Սիմոնյանին, որը ոչ թե տարբերակում է արևմտահայն ու արևելահայը, այլ փորձում է միավորել հայոց տան երկու սյուները մի տանիքի տակ: Իմ հարյուրավոր բանասացների օրինանքը Ձեզ սիրելի հայասեր ու ժողովրդասեր: Նրանց հոգու ջերմությունն այս ժողովածուի հետ թող փոխանցվի Ձեզ, որ ինքն այն Ձեր հերթին փոխանցեք եկող սերնդին ի փառս իսկ ազգի:


Այս ժողովածուի ծնունդը մաքառման ճանապարհ էր, որն անցել են իմ վաղամեռիկ եղբայրների՝ Հենրիկ և Հերմես Խենյանների օգնությամբ, բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Հարությունյանի ղեկավարությամբ ու աջակցությամբ, Գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակչության աշխատակիցների անմիջական գործուն մասնակցությամբ: Այս ճանապարհի վերջակետը դնում եք Պուք, սիրելի Հարություն Սիմոնյան, և ես բոլորիս անունից ջերմորեն ու երախտագիտությամբ շնորհակալություն են հայտնում Ձեզ, Ձեր մեծ ու անուրանալի աջակցության համար՝ լույս աշխարհի բերելու ժողովրդական գանձերի մի մոռացված էջ ևս և հնարավորություն տալու Տավուշ աշխարհին Հայոց մյուս գավառների շարքում իր արժանի տեղը գրավելու:


19.06.2000

ԷՍԹԵՐ ԽԵՍՏՅԱՆ



[260077]





ԳՍԱ Հիմնարար Գիտ Դրադ.



230007271